



Օ Ր Ա Գ Ի Ր

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲՆԵՍԻՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՒ

ԲՆԵԿԱՆ ԳԻՏԵՆԵԼՑ

Դ. ՏԱՐԻ, ԹԻԻ 9.

1846

ՄԱՅԻՍԻ 1.

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Պիտի Կարգաւորան Բարոյական օգուտները :

Որովհետեւ կրթութիւնը և ուսմունքը ըսածնիս է ճանչնալ զՍտուած, ինքզինքը, զմարդիկ, և ասոնց պատշաճ պարտքերը կատարել, պէտք է որ ասոնք խիստ յայտնի և դիւրին բաներ ըլլային. բայց աս կայ որ մարմիննիս թանձր է, և մեր հոգւոյն ազդմունքը ուղիղ չգործադրեր. աս պատճառաւ բնական օրինաց սկզբունքները՝ որոնք որ կ'առաջնորդեն մեզի մարդկութեան ճամբուն մէջ, չեն յայտնուիր՝ ինչուան որ չքնենք: Ուստի աս կրթութիւնը և դաստիարակութիւնը ըսածնիս ուրիշ բան ըսել չէ, բայց եթէ սորվեցնել մարմիններուն որ շիտակ իմանայ հոգւոյն ազդմունքը, և առանց սխալելու ճանչնայ ու զատէ գէշն աղէկէն: Եւ բանիս գործադրութիւնը կ'ըլլայ՝ ինչպէս որ յայտնի է, քննելով և դիտելով թէ որն է բնուէ և խղճմտանքի յարմար. աս ալ յայտնի է որ աս քննութիւնը այնչափ աղէկ կ'ըլլայ՝ որչափ որ աւելի

փորձեր ըլլուին, և աւելի գիտցող մարդիկներու հարցուի: Եւ որ ո՛ր են աս խորհուրդ տալու կարող մարդիկները: Եւ ատերը հին ատենը եկած ու գնացած են. ինչպէս են Ստուծոյ պատգամները գրողները, առաքեալները, սուրբերը, նաև ամէն իմաստուն և առաքինի մարդիկները. ուրիշներն ալ հիմա այլևայլ հեռաւոր աշխարհներու մէջ կ'ապրին: Եւ ասոնց ամենուն պէտք է որ խորհուրդ հարցնել. բայց աս բանս երբ կ'ըլլայ և ինչպէս: Եւ մէկ հատիկ ճամբայ. անոնք ամէնքն ալ իրենց հարկաւոր մտածութիւննին գրքերու մէջ կ'անցընեն և անցուցեր են. ուրիշներն ալ պէտք է որ ետեւէ ըլլան, կարգան անոնց գործները, բաղդատեն զանոնք իրենց մտածմունքներուն հետ, ու ինչպիսի շտկեն իրենց վարմունքը: Իսկ թէ որ փորձով ալ կ'ուզեն իմանալ թէ բնութեան օրինաց յարմար կամ գէժ գործելէն ինչեր կը հետեւին, և թէ որ

չափ հարկաւոր է շիտակ ճամբէն չիտորիլը . որչափ որ դժուար է անձամբ փորձելը աս ամէն հետաքրքրական հարկաւոր ճամբատութիւնները, այն չափ ալ աւելի դիւրին և զուարճալի է՝ աշխարհքիս սկիզբէն ինչուան հիմա պատահած ամէն դիպուածները, նաև հիմա աշխարհքիս ամէն ծայրը եղած գործքերը մէկ աչքով տեսնել՝ ամէնքն ալ գրքերու մէջ կարգաւ նըշանած, ու անոնցմէ խրատուիլ, գէշէն զգուշանալ ու աղէկին հետեւիլ:

Եւ ուրիշ կ'իմացուի որ դաստիարակութիւնը կատարեալ ըլլալու համար մէկ հատիկ ճամբայ է գիրք կարդալը . և մէկ ազգի մը մէջ, մէկ քաղքի մը մէջ և մէկ տան մը մէջ որչափ որ պակաս է գիրք կարդալու սովորութիւնը, այնչափ աւելի մեծ տգիտութեան մէջ են ան ազգին՝ ան քաղքին և ան տանը բնակիչները, և այնչափ աւելի պակասաւոր է մըտածմունքնին ու սխալ է դատմունքնին: Տես ուրեմն թէ որչափ կը սխալին անոնք որ կարդալը իրենց համար աւելորդ բան կը սեպեն . և եթէ խիստ ալ նեղը մտնելու ըլլան, չեն ամբնար ըսելու՝ թէ աւելորդ ժամանակ չունինք կարդալու և մեզի հարկաւոր չեղած բաները գիտնալու ետեւէ ըլլալու . մեր գիտցածը, կ'ըսեն, մեզի բաւական է: Եւ խօսքերուս իմաստը դիւրաւ կը հասկնանք առջի ըսածներնուս կանոնովը, որ ըսել է՝ թէ կըթուլան ու մարդկութիւն չենք ուզեր . մեր տգիտութեանը վրայ մենք գոհ ենք . անբան ըլլալը մարդկութենէն աւելի վեր կը սեպենք: Եւ տեսակ կարծիք ունեցող մարդիկ ինչպէս կրնան կըթուլ, մարդկութիւն սորվիլ, օրինաց դրած կանոններէն դուրս չելլել: Ասն զի այսպիսի մարդիկ իրենց բնական բերմանցը կը հետեւին, և ինչ բանի որ ձեռուրնին հասնի՝ ան բանը զանց չեն ըներ, այլ իբրև օրինաւոր կը կատարեն: Եւ անկները թոյլ կ'ըլլան սովորաբար իրենց հաւատքին մէջն ալ:

Վասն զի մէկ քանի սուտումուտ աչք խաբող պատճառներ հերիք են զանոնք խաբելու: Իսկ ով որ կ'ուզէ կըթուլ, բնական օրինաց և մարդկութեան պարտքերը ճանչնալ, իր վարմունքը շտկել ու կատարեալ մարդու վարմունք ունենալ, իր գլխաւոր պարտքերուն կարգը կը սեպէ գիրք կարդալը . անոր համար ամէն օր կարդալու ատեն կ'որոշէ՝ գիտնալով որ ամէն բանէն հարկաւորը կըթուլան է, և աս կըթուլանը կը կատարելագործուի կարդալով:

Արդեօք կայ մարդ որ լսած չըլլայ աս խօսքս, որ պարծելով կ'ըսեն շատ մարդիկ իբրև մէկ յայտնի նշան մը իրենց կարողութեանը և հմտութեանը, թէ աս ականջները շատ բաներ լսեր են, և աս աչուրները շատ բաներ տեսեր են: Ինչու կ'ըսեն աս խօսքս . անոր համար որ հաւատացնեն թէ իրենք ամէն բանի տեղեակ են, փորձ են, գիտեն թէ ինչէն ինչ կ'ելլէ, կը ճանչնան և գիտեն ընտրել աղէկը գէշէն: Եւ աս բանիս ամէնքը կը վկայեն՝ թէ շատ բան լսողը և տեսնողը փորձ մարդ է: Իայց աս ալ պէտք է գիտնալ որ մէկ մարդու մը շատ լսած ու տեսած բաներուն մէջ խիստ քիչը խելք սորվելու դիպուածներ են . ուրեմն եթէ մէկն որ շատ խառնափնդոր բաներ տեսնելով ու լսելով կրնայ խելք սորվիլ անոնցմէ, հապա որչափ աւելի՝ թէ որ գրքեր կարդալով տեսնէ ու լսէ միայն խելք սորվելու բաները մէկտեղ հաւաքած: Ի՞նչ զարմանալի և դիտելու բան է . երբոր մարդ մը դրսէն ներս տուն մտնէ, թէպէտ և խիստ տգէտ ալ ըլլայ՝ մէկէն անոր կը հարցնեն ու կ'ուզեն իմանալ թէ ինչ նոր բան մը լսեր կամ տեսեր է, և անոր ծուռ ու շիտակ՝ սուտն ու իրաւը խառնած պատմութիւնները զուարճութեամբ մտիկ կ'ընեն, ու խելք մը չեն սորվիր: Եթէ ասոնց խելքը հասնէր որ ան իրենց լսել փափաքած դիպուածներուն օգտակարները և անթիւր դի-

մացնին գրոց մէջ կեցեր են, ինչպէս կարելի էր որ չուզէին գիրք կարդալ. մանաւանդ թէ ինչպէս կարելի էր որ համբերէին՝ թէ որ մէկն անոնց արգիւէր ան գրքերուն կարդալը, որ ամէն տեսակ հարկաւոր միտք բացող գիտելիքներով լեցուն ըլլալը գիտնային իրենք. միթէ ասոնք կարդալը իր չգիտցածն ուրիշի հարցընել չէ. և չէ թէ սանկ նանկ մարդու, այլ գիտցողի. հապա ինչպէս կ'ըլլայ որ ասոնք աւելորդ սեպուին: Այլ միթէ ասոնք ժամանակի կարօտ են. աւելորդ հանգրստեան ժամանակները ասոնցմէ աւելի ինչ բանով կրնայ մէկը զուարճութեամբ անցընել: Այս չեմ ըսեր թէ մարդ երթայ քաշուի առանձին ու նստի անձայն կարդալու հետ ըլլայ. այլ նոյն ընկերութե մէջ բարձր ձայնով բան պատմելու պէս կարդայ. և ան կարդացածին վրայ տեղ տեղ հարկաւոր տեղուանքը մէկը մէկալը տարակոյս հանեն՝ խօսին. երբեմն քիչ մըն ալ միջոց տան, և կամ ուրիշ բան սկսին կարդալ: Ինչանկ մէկտեղ կարդալով, և չհասկըցածնին իրարու մեկնելով, չէ թէ միայն ձանձրութի չեն իմանար, այլ և կը սկսին վարժիլ գրուածքին իմաստը հասկընալու: Այսպէս հաւաստելէն ետքը թէ կարդալով կ'ըլլայ կրթութիւնը և ուսմունքը, յայտնի կ'իմացուի թէ ինչ մեծ պակասամտութիւն է կարծելը թէ կարդալ գրել գիտնալը մարդուս հարկաւոր բան մը չէ. և թէ շատ ան խելք մարդ պիտի ըլլայ մէկը որ համարձակի ըսելու ալ թէ մեզի կարդալը հարկաւոր չէ: Հապա թէ որ մէկն ըսէ՝ թէ ինքը կը ձանձնայ կարդալուն օգուտները, ու անհոգութիւն իր պարապ ատենները աւելորդ խօսքերով ու անօգուտ խաղերով անցընէ, այնպիսին ինչ տեսակ մտածութիւն ունեցող մարդ պիտի ըլլայ, որ աղէկը՝ հարկաւորը ձանձնայ, ու ինքը կամօք գէշն ու անօգուտը և իր թշուառութեան պատճառ եղած բաները սիրէ, ու անոնց ետեւէն երթայ:

Եւ բաներս մէկը թէ որ քիչ մը հասկընայ, ու հասկընալով վրան մտածէ, մէկէն կ'իմանայ թէ ինքը խելքով կը մտածէ թէ գէշ: Ասան զի կը գրտնուին այնպիսի անձինք՝ որ աս խօսքերս լսելու ատեն, խօսողին բերնէն խօսքը կը կտրեն, ու իրենք կը սկսին ալ աղուոր ու աւելի տեղն ի տեղը պատճառներով ցուցընել ան մարդկանց անմտութիւնը՝ որոնք ուսումն ու կրթութիւնը աւելորդ բանի մը տեղ դրեր են. բայց թէ որ ան խօսողին վարքը քննես, կը տեսնես որ ինքն ալ անոնցմէ մէկն է:

Եւ խօսքերս ուրիշները վար զարնելու համար չենք ըսեր, այլ միայն թէ որ այդպիսի մարդիկ կը գտնուին մեր ազգին մէջ՝ անոնց ալ միտքը արթննայ ու սկսին նախ գործքերնին շտկել, ետքն ալ խօսքերնին գործքերնուն յարմարցընեն. նախ գործեն ինչ որ կը վայել մարդուս, ետքը ըստ այնմ խօսին, որով իրենք իրենց ալ և ուրիշներուն ալ օգտակար ըլլան. ասան կով ահա մեր ազգին դաստիարակութիւնը կրնայ առաջ գալ: Եւ թէ ոչ, միայն ձանձնալով՝ անօգուտ խօսելէն՝ չէ թէ միայն օգուտ չեւեր, այլ նաեւ փնաս ատելութեան և արհամարհութեան: Արդ ո՞ր կը մնայ ան շատերուն մեծ գիտաւորութիւնը որ կը բերեն ու կ'ըսեն թէ թէպէտ իրենք կը յօժարին գնելու ամէն տեսակ հարկաւոր եղած գրուածքները, բայց ստրկին պակսութիւնը իրենց ամէն յօժարութիւննին պարապը կը հանէ: Եւ խօսքս որչափ որ շիտակ կը կարծուի և իրաւացի, թէ որ բարակ քննելու ըլլանք՝ կը գտնենք որ ուսման յարգը չգիտնալն է շատերուն ասանկարութեանը պատճառ. վասն զի ան մարդիկն որ ստրկի պակսութեանը վրայ կը գանգատին, կը տեսնուի որ անոնք իրենց ամէն հարկաւոր սեպած բաներուն կրնան ստակ հասցընել: Ինչոնք աս խօսքերս ալ լսելու ատեն՝ մէկէն կը սկսին տրտնջալ ըսելով թէ՝ « Եւ ինչ ըսել է. միթէ տանը

հարկաւոր ծախքերը մէկդի թողունք ու գրքեր գնելու հետ ըլլանք . ատանկ բան ո՞ւր տեսնուած է , : Բայց աս տեսակ խօսքերուն տգիտութենէ առաջ եկած ըլլալը՝ ինչուան հիմա ըսուած պատճառներէս բաւական իմացուեցաւ :

Հ . Գ . Մ

Տղայ իրիւելու նոր իերպ :

ՇԱԲԱԹ իրիկուն դիպուածով մը տղայ կրթելու նոր կերպ մը տեսայ : Եւ միս-մինակ կամաց կամաց Խիալ-թոյի՝ կամրջէն վար կ'իջնայի . դիմաւ չէս մարդ մը կ'երթար միջակ տարիքով, հագուած կապուած, հետն ալ սիրուն տղայ մը . աս տղան կ'երենար թէ անկուշտ հետաքրքրութի մը ունէր որ ամէն բան հարցունէ իմանայ . ուստի մարախի պէս մէկ հարցմունքէն մէկալը կը ցատքէր անդադար : Բսկէ աղէկ բա՛ն կայ . տղոց դաստիարակները չե՛ն ըսեր թէ աս հետաքրքրութիւնը տղու մը վրայ շատ լաւ նշան է : Ի՛նչ և իցէ, տեսնեմ որ աս տղան մէյմը դէպի երկինք նայեցաւ, « Հայր, ըսաւ, աստղերը ի՛նչ են : — Որդի, ըսաւ հայրը, աստղերը աստղ են . նայէ ի՛նչպէս կը փալկիլին : — Ի՛նչն է նէ մոմ են, ըսաւ տղան : — Հա որդիս, ըսաւ հայրը, մոմի պէս բաներ են : — Ղրա՛գ են՝ չէ նէ կերոն : — Ղրա՛գ . չէ՛ տղաս . երկինքը ճրագ չըլլար . կերոն են կերոն , : Խեղճ՝ մարդը ի՛նչ՝ ընէ, կը տեսնէր որ բանը գէշ է, պատասխան չունի : « Հիմա առջևդ նայէ որ չիյնաս, ըսաւ տղուն . այնչափ բան կայ վարը, անոնց չես նայիր, ու ելեր աս աստիկ երկինք կը նայիս : — Հապա սրտոնք ի՛նչ են , » ըսաւ տղան, ու ձեռքովը

1 Խիալթոյի կամուրջը վէնետիկի մեծ կամուրջն է . աս պատմութիւնը Կոնստանտինուպոլսի մէջ տիկնի հեղինակին պատմածն է որ գրեթէ ճիշդ թարգմանեցինք :

ձկնորսի մը խանութին մէջի օձաճրկները՝ կը ցուցնէր : « Ի՛նչն ցորցուցած օձաճուկ կ'ըսեն տղաս, ըսաւ հայրը . անանկ համով ու պատուական բան է աս օձաճուկն որ մարդ ուտելով չիչտանար : Բայց ասոր կաշին զգուշութեամբ կը սրկրդեն կը հանեն վրայէն՝ հագուստին թւը վեր սօթտելու պէս . ետքը (աղէկ ուշ դիր ծօ ըսածիս, օր մը դուն պիտի դարձնես իմ տունս ու ծառաներուն խօսք պիտի հասկըցնես . տանտէր մը իր բանը չգիտնայ նէ, ծառայ ըսածդ փայտի կտոր է .) ետքը կ'առնեն օձաճուկը տաք ջրի մէջ թրջոց կը դնեն քանի մը ժամ, ու անկէ ետեւ կը խաշեն, սեղան կը բերեն . ալ դուն ձէթը պղպեղը դիր, լիմոն ալ քամէ վրան ու կեր, նայէ թէ ի՛նչ կ'ուտես , » : Եւ դասախօսութիւնը մտիկ ընելէս ետեւ ինքիւրենս կ'ըսէի . « Սա տղուն առած տեղեկութիւնները նայէ . օձաճուկին վրայ այնչափ բան սորվեցաւ որ ուրիշի ալ կրնայ սորվեցնել . իսկ երկնքի աստղերուն համար անտարակոյս ինչուան որ ծերանայ՝ միտքը պիտի դնէ թէ մէյմէկ մեղրամոմէ կերոններ են , » : Ի՛նչ որ է նէ, առաջ երթանք : « Հայր, ըսաւ տղան . աս որչափ միս՝ աս որչափ ուտելիք է . անոնք ամէնն ալ պիտի ուտուին : — Ի՛նչ ըսել է տղաս, ամէնն ալ կ'ուտուին . ինչու որ վաղը զատիկ է, մեծ օր է . ուստի ամէն մարդ կը նայի որ տունը սեղանը չեն ըլլայ, ու տնով տեղով կ'ուտէ կը խմէ կ'ուրախանայ : — Աղը ես ալ այնչափ պիտի ուտեմ որ ինչուան փորս ճաթի , » ըսաւ տղան ցատքըտելով : Հայրը խնտաց . էտին դարձաւ, տեսաւ որ ես կամաց կամաց ետեւէն կուգամ, ծիծաղելով մը աչք ըրաւ ինծի . ըսել կ'ուզէր թէ « Սա տղուս խելքին խօսք ունիս , » : Հարուստ խանութներուն առջևն որ հասան, հարցուց տղան թէ « Հապա

1 Եւսն Կալուէ : Աս ձուկը որ Եւրոպացոց մէջ յարգի է, վէնետիկցիք մասնաւոր սովորութիւն ունին խթման իրիկունն ուտելու :